ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Արմավիրի մարզի Արևիկ համայնքում մոդուլային տիպի մսուր-մանկապարտեզի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/2 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2021 թվականի հունվարի 20-ին կնքված N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/2 պայմանագրում 2021 թվականի հունիսի 10-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

1.	Փոփոխության առաջացման պատճառ	ՀՀ կառավարության 06.05.2021թ. N 741-Ն որոշումը:
	Փոփոխության նկարագրություն	N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/2 պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցների հատկացում:
	Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 8.5 և 8.13 կետեր:
2.	Փոփոխության առաջացման պատճառ	Օրացուցային գրաֆիկի հաստատում:
	Փոփոխության նկարագրություն	Պատասխանատու ստորաբաժանման եզրակացություն:
	Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 8.5 կետ:

Պատվիրատու՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
20.01.2021թ. կնքված N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/2 գնման պայմանագրի

ք. Երևան 10 . 06 .2021թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<ՆԱՐ-ԴԱՎ ՇԻՆ>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Վ. Գրիգորյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 06.05.2021թ. N 741-Ն որոշումը և ՀՀ Արմավիրի մարզի Արևիկ համայնքում մոդուլային տիպի մսուր-մանկապարտեզի կառուցման աշխատանքների կատարման համար Կողմերի միջև 20.01.2021թ. կնքված N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝

1.1.1 Հաստատել 2021 թվականի աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկը՝ համաձայն Համաձայնագրի N1 հավելվածի:

1.1.2 Պայմանագիրը լրացնել նոր հավելված N3-ով՝ համաձայն Համաձայնագրի N2 հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Համաձայնագրի հավելվածներ N 1-ը և N 2-ը բաղկացած են մեկական էջերից և համարվում են Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<ՆԱՐ-ԴԱՎ ՇԻՆ>> ՍՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ք. Երևան, Արին-Բերդի 2/1
կառավարական տուն 3	<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 1150019533443448
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 00491427
Հ/Հ 900011037612	
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Ա. Մկրտչյան	_____ Վ. Գրիգորյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
20.01.2021թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/2 գնման պայմանագրի
10 .06.2021թ. կնքված N 1 համաձայնագրի

ՕՐԱՑՈՒՅԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ*

ՀՀ Արմավիրի մարզի Արևիկ համայնքում մոդուլային տիպի մսուր-մանկապարտեզի կառուցման աշխատանքների իրականացման համար 2021թ.
հատկացված գումարների շրջանակում կատարվելիք աշխատանքների վերաբերյալ

Կատարման ենթակա աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ

N	Գումար	Կատարվելիք աշխատանքների ներկայացման վերջնաժամկետը
1	86 358 585	ոչ ուշ քան 90-րդ օրացուցային օր
2	191 338 270	ոչ ուշ քան 180-րդ օրացուցային օր
3	472 250 916	ոչ ուշ քան 240-րդ օրացուցային օր
	472 250 916	240 օրացուցային օր

*** Շինարարական աշխատանքների տեխնոլոգիական հաջորդականությանն առնչվող բոլոր փոփոխությունները անհրաժեշտ է նախօրոք համաձայնեցնել Պատվիրատուի հետ:**

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011037612
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝

(ստորագրություն) Ա. Մկրտչյան
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
<<ՆԱՐ-ԴԱՎ ՇԻՆ>> ՍՊԸ
ք. Երևան, Արին-Բերդի 2/1
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1150019533443448
ՀՎՀՀ 00491427
Տնօրեն՝

(ստորագրություն) Վ. Գրիգորյան
Կ.Տ.

Հավելված N 2
20.01.2021թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/2 գնման պայմանագրի
10 . 06.2021թ. կնքված N 1 համաձայնագրի

<<Հավելված N3
20.01.2021թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/2 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45221142/520	ՀՀ Արմավիրի մարզի Արևիկ համայնքում մոդուլային տիպի մսուր-մանկապարտեզի կառուցման աշխատանքներ	-	-	-	-	-	-	235 000 000	235 000 000	235 000 000	472 250 916	472 250 916	472 250 916	472 250 916

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:>>:*

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011037612
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝

<<ՆԱՐ-ԴԱՎ ՇԻՆ>> ՍՊԸ
ք. Երևան, Արին-Բերդի 2/1
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1150019533443448
ՀՎՀՀ 00491427

Տնօրեն՝

Վ. Գրիգորյան
(ստորագրություն)
Կ.Տ.

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
«ՔԱՆԱՔԵՌ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
ЗАО «АРМБИЗНЕСБАНК»
ФИЛИАЛ “КАНАКЕР”
“ARMBUSINESSBANK” CJSC
“QANAQER” BRANCH

N 32-415
«8» հունիսի 2021

Բենեֆիցիար՝ ՀՀ Քաղաքաշինության կոմիտե
Պրինցիպալ՝ ՆԱՐ-ԴԱՎ ՇԻՆ ՍՊԸ

ԵՐԱՇԽԻՔ N E21-000747
(պայմանագրի ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) և ՆԱՐ-ԴԱՎ ՇԻՆ ՍՊԸ միջև կնքվելիք N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/2 պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 47,225,092 /Քառասունյոթ միլիոն երկու հարյուր քսանհինգ հազար իննսուներկու/ ՀՀ դրամ գումարի (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրիցիպալի միջև կնքվելիք N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/2 պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև կնքվելիք պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման վերջնաժամկետը, ներառյալ երաշխիքային ժամկետի օրվան հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ոչ ուշ քան **31-ը օգոստոսի 2023թ.**: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Զ. Սարկավագի 72/9; Հեռախոս՝ (+37460) 37 25 32; Էլ.փոստ՝ qanaqer@armbusinessbank.am; Կայք՝ www.armbusinessbank.am
Адрес: З.Саркаваг 72/9, г. Ереван, РА; Телефон: (+37460) 37 25 32; Эл.почта: qanaqer@armbusinessbank.am; Веб-сайт: www.armbusinessbank.am
Address: 72/9 Z. Sarkavag, Yerevan, Armenia; Telephone: (+37460) 37 25 32; E-mail: qanaqer@armbusinessbank.am; Web-site: www.armbusinessbank.am

1) N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/2 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կառավարիչ՝ Հայկ Պետրոսյան

Գլխավոր հաշվապետ՝ Լարիսա Մակարյան

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
«ՔԱՆԱՔԵՌ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
ЗАО «АРМБИЗНЕСБАНК»
ФИЛИАЛ "КАНАКЕР"
"ARMBUSINESSBANK" CJSC
"QANAQER" BRANCH

N 32-414
«8» հունիսի 2021

Բենեֆիցիար՝ ՀՀ Քաղաքաշինության կոմիտե
Պրինցիպալ՝ ՆԱՐ-ԴԱՎ ՇԻՆ ՍՊԸ

ԵՐԱՇԽԻՔ N E21-000746
(որակավորման ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/2 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում ՆԱՐ-ԴԱՎ ՇԻՆ ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից կնքված N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/2 պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 141,675,275 /Մեկ հարյուր քառասունմեկ միլիոն վեց հարյուր յոթանասունհինգ հազար երկու հարյուր յոթանասունհինգ/ ՀՀ դրամ գումարի (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Երաշխիքի գումարը վճարելուց հաշվի է առնվում պայմանագրի կատարման շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված և պրինցիպալի կողմից երաշխիքը տված անձին ներկայացված հանձնման-ընդունման արձանագրության (արձանագրությունների) հիման վրա երաշխիքի գումարից կատարված նվազեցումները:

Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/2 ծածկագրով կնքվելիք պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև կնքվելիք պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման վերջնաժամկետին հաջորդող իններորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ոչ ուշ քան **31-ը օգոստոսի 2022թ.**: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Զ. Սարկավագի 72/9; Հեռախոս՝ (+37460) 37 25 32; Էլ.փոստ՝ qanaqer@armbusinessbank.am; Կայք՝ www.armbusinessbank.am
Адрес: З.Саркаваг 72/9, г. Ереван, РА; Телефон: (+37460) 37 25 32; Эл.почта: qanaqer@armbusinessbank.am; Веб-сайт: www.armbusinessbank.am
Address: 72/9 Z. Sarkavag, Yerevan, Armenia; Telephone: (+37460) 37 25 32; E-mail: qanaqer@armbusinessbank.am; Web-site: www.armbusinessbank.am

ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/2 ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.

3) պայմանագրի շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը (արձանագրությունները) կամ դրա (դրանց) պատճենները:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կառավարիչ Հայկ Պետրոսյան

ՀՄԴՀ Բաժնի պետ՝ Լարիսա մակարյան